

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2018

Տևողությունը **150** րոպե

12-րդ դասարան

Ա. Աշխատանք բնագրով:

Նա հազավ մետաքսյա ծաղկավոր պատմուճանը, որ իջնում էր մինչև սրունքները: Պատմուճանի լայն, ոսկյա ճարմանդները ծառայում էին ավելի իբրև զարդ, քան թե բազուկները կոճկելու համար: Մեջքին կապեց ականակուռ ոսկյա քամարը, որի ծայրերը ներկայացնում էին մի բարձրաքանդակ աստղ՝ սփռված ճաճանչներով: Աստղի մեջտեղում վառվում էր մի վարդագույն գոհար: Քամարի ձախ կողմից՝ ազդրի վրա, կախված էր երկսայրի թուրը: Պատմուճանի վրա հազավ ասրյա կարճ թիկնոցը, որը նախշված էր ոսկեթել հյուսվածքներով: Նրա իշխանական պաճուճանքը լրացրին երկու ոսկյա գինդեր: Նա այս առավոտ այսպես հագնվեցավ. գիտեր՝ յուր մայրը անպատճառ կկանչի իրեն, այդ պատճառով կամեցավ երևնալ մոր աչքին այնպես, որ կասկածի տեղիք չտար: Տեղին է հիշել հետևյալ թևավոր խոսքը. <<Մա՛հ, որտե՞ղ է քո խայթոցը>>: Այդ միջոցին դռները բացվեցան, և ներս մտավ մի մարդ՝ անմորուս, առանց ընչացքի, նեղ աչքերով՝ առանց թերթերունքների:

1. Նշե՛ք՝ որտեղից է առաջացել <<Մա՛հ, որտե՞ղ է քո խայթոցը>> թևավոր խոսքը, և ինչ է այն նշանակում: (2 միավոր)
2. Նշե՛ք՝ **ականակուռ** բառի առաջին արմատը ինչ իմաստով է գործածված և գրաբարյան որ հոլովածն է : (1 միավոր)
3. Դու՛րս գրե՛ք գրաբարյան նախդիրներ պարունակող բառերը: (1 միավոր)
4. Դու՛րս գրե՛ք հնաբանությունները: (2 միավոր)
5. **Պատմուճան, ճարմանդ, գինդ, սրունք** բառերի իմաստները բացատրե՛ք կամ գրե՛ք մեկական հոմանիշ: (2 միավոր)
6. Նշե՛ք՝ տեքստում որոնք են **բրդյա, զիստ, բեղ, արտևանունք, աղամամուր** բառերի հոմանիշները: (2 միավոր)
7. Նշե՛ք՝ տրված բառերը խոսքիմասային ինչ արժեքներով կարող են հանդես գալ՝ **մինչև, համար, ձախ, ներս** : (1 միավոր)
8. Նշե՛ք՝ ինչ խոսքի մասերի արժեքներով են կիրառվել տրված բառերը՝ **համար, ձախ, քան թե, միջոցին**: (1 միավոր)
9. Առանձնացրե՛ք այն նախադասությունը, որում ստորադաս նախադասությունը գլխավորի հետ միացած է շարահարությամբ: Նշե՛ք ստորադաս նախադասության շարահյուսական արժեքը: (2 միավոր)
10. Դու՛րս գրե՛ք ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն ունեցող բարդ ստորադասական նախադասությունը: (1 միավոր)

Բ. Շարադրություն՝ «Իմաստուն խոսքի արժեքը» վերնագրով
(երկու էջի սահմաններում): (5 միավոր)